պանիայ, միաբանեալ ընդ նոսա՝ պատերազմեցան ընդ քրիստոնեայսն. ուր Թէպէտ բազում քրիստոնեայք կոտորեցան, բայց յաղթեցին Թունուզցոյն, ԳՌ. ձիաւորս և հազարս հազարաց հետևակաց կոտորեցին, և աւար առին զամենայն ինչեանս և զկարասիս։

Ռուտոլֆուս Տուկն եղև ընտրեալ ՚ի կայսերութիւնն՝ յամի Տեառն ՌՄՀԳ։ Սա Թագ և անուն ինքնակալութեան ոչ ժամանեաց առնուլ. զի Պապն Գրիգորիս հրամայեաց նմա անձամբ գնալ ընդ Պապոյն ՚ի յազատութիւն սուրբ աշխարհին, և յետ յաղթութեանն Թագիլ ՚ի Պապէն։ Նա ուխտեաց, բայց ոչ ժամանեաց. և իշխեաց ամս ԺԸ։ Նա Տաճիկքն առին զամենայն բոլոր աշխարհին սրբոյն, և բարձան քրիստոնեայքն ՚ի սուրբ աշխարհէն։

Ադոլֆ Տուկն Նազջյին եղև ընտրեալ Թագաւոր Ալամանաց և Հռոմայեցւոց,

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան